ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ

Լ.Օհանյանին

Ք.Երևան, Կոմիտաս 54 բ,

Հեռ 37411289326

Էլ փոստ gbqa_ohanyan@mail.ru

Բողոքը ներկայացրած անձի անվանում	«ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի տնօրեն Վան Մուրադյան Անձնագիր AT0508590 24.06.2020թ.-ին 011-ի կողմից 099522079, van@vd.am **Բանկ -Ինեկոբանկ ՓԲԸ** **հ/հ 2050022265091001** ՀՀ ք, Երևան, Նալբանդյան 17
Պատվիրատուի անվանումը և հասցեն	***«ՀԱԷԿ» ՓԲԸ ՀՀ,*** ***Արմավիրի մարզ, ք.Մեծամոր ,*** գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Հռիփսիմե Ռամազյան Հեռ. +374 10 20 04 91
Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.	ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/20 , **ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

ԲՈՂՈՔ

Գնահատող հանձնաժողովի 06 /11/2020թ նիստի թիվ 2.1 արձանագրությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ

ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/20 ԾԱԾԿԱԳՐՈՎ ,«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար համակարգիչների եվ պատճենահանող սարքավորումների գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու համար՝ հայտ է ներկայացրել «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04/11/2020թ. տեղի ունեցած նիստի թիվ N2 արձանագրության 6-րդ կետի համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ: Նշված անհամապատասխանությունների մասին ծանուցվել ենք 04/11/2020թ, միևնույն ժամանակ առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ սահմանելով մեկօրյա ժամկետ:

«ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն ծանուցման հաջորդ օրը 05/11/2020թ վերացրել է նշված անհամապատասխանությունները և ուղարկել պատվիրատուին:շտկված հայտը:

Սակայն գնահատող հանձնաժողովի՝ 06.11.2020թ.-ի թիվ 2.1արձանագրության համապատասխան «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել՝ պատճառաբանելով, որ «ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ն ուշ է ուղարկել հայտը, քանի որ հայտի ներկայացման ժամկետը լրացել է 05/11/2020թ ժամը՝ 16:30:

Այսպիսով, չընդունելով հայտն այն դեպքում, երբ «Վանդիստ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում իրականացրել է իր վրա դրված պարտականությունները հակասում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետների հաշվարկին, մասնավորապես՝ նշված օրենսգրքի 115-116-րդ հոդվածներին, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2017թ թիվ 524-Ն որոշման 41 կետի պահանջներին:

Գտնում ենք, որ «Վանդիստ ՍՊԸ»-ն սահմանված մեկօրյա ժամկետում ներկայացրել է հայտի շտկված տարբերակը և հետևաբար այն չէր կարող ուշ ներկայացված լինելու հանգամանքով պայմանավորված գնահատվել անբավարար:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներով՝

Խնդրում ենք

Գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել ընդունել/ գնահատել բավարար Վանդիստ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և/ կամ անվավեր ճանաչել 06.11.2020թ.-ի գնահատման հանձնաժողովի թիվ 2.1արձանագրությունը

<u>Կից ներկայացվում են</u>

1. Վան Մուրադյանի անձնագրի պատճենը
2. Վանդիստ ՍՊԸ-ը պետական ռեգիստրի պատճենը
3. Բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը:
4. Գնահատման հանձնաժողովի թիվ 2.1արձանագրության պատճենը:

«ՎԱՆԴԻՍ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վ.Մուրադյան

Digitally signed by MURADYAN VAN 3105840125
Date: 2020.11.16 11:05:09 GMT+04:00

16.11.2020թ